

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«26» փետրվար 2019թ.

No 473 – Ա

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ «ԼՈՒԲՆԻՖԱՐՄ ՀԲԸ, 37500, ՊՈՒՏԱՎԱ ՇՐՋ., ԼՈՒԲՆԻ,
ՊԵՏՐՈՎԱԿԻ Փ. 16» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
«ԴԻԿԼՈՍԱՆ, ԴԻԿԼՈՖԵՆԱԿ (ԴԻԿԼՈՖԵՆԱԿ ՆԱՏՐԻՈՒՄ), ՆԻԿՈՏԻՆԱԹԹՈՒ,
ԴՈՆԴՈՂ, 10ՄԳ/Գ+10ՄԳ/Գ; ԱԼՅՈՒՄԻՆԵ ՊԱՐԿՈՒՃ 40Գ» ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման կարգը և դեղերի պետական գրանցման փորձաքննության վարձի չափերը հաստատելու մասին» N 347 որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի «ա» ենթակետը, այն է, առկա է «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 15.02.2019 թվականի N 18343 բացասական եզրակացությունը, համաձայն, որի «Դիկլոսան, դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում), նիկոտինաթթու, դոնդող, 10մգ/գ+10մգ/գ; այլումինե պարկուճ 40գ» դեղի օգուտ/վտանգ հարաբերակցությունը գնահատվում է բացասական, արդյունավետության և անվտանգության փորձաքննության արդյունքները գնահատվում է որպես ոչ արդյունավետ և ոչ անվտանգ, հիմք՝ փորձաքննության եզրակացություն N1176218, 12.02.2019թ.: Դեկավարվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի

16-րդ հոդվածի 27-րդ մասի 1-ին կետը՝

1773
26 FEB 2019 ժամ 12:50

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Կից Դեղի կարգավիճակ
Նշումներ

1.Մերժել Ուկրաինայի «Լուբնիֆարմ ՀԲԸ, 37500, Պոլտավա շրջ., Լուբնի,
Պետրովսկի փ. 16» դեղագործական ընկերության արտադրության «Դիկլոսան,
դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում), նիկոտինաթթու, դոնդող, 10մգ/գ+10մգ/գ;
այլումինե պարկուճ 40գ» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

Տեղեկ. 26.02.19 ՏԻՁ ԲՈՅՑ


2. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին սույն հրամանը 3-օրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ առաքել հայտատուին:

3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Լ.Մելիքյանին՝ 3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի տրամադրումը հայտատուին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի հայտատուներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

2/26/2019

X 

VERIFIED OCSP 2/26/2019 11:24:25 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ